

2014թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թեմայի անվանումը

Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու
կանխատեսումը ՀՀ-ում

Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը

1 ՏԱՐԻ

Հաշվետու ժամանակահատվածը

01.01.2014թ. - 31.12.2014թ.

Թեմայի ղեկավարը

Տիգրանյան Իշխան Տաճատի
տ.գ.թ., պրոֆեսոր

Թեմայի մասնակիցներ

1. Մկրտչյան Թաթուլ Մելսի – գիտաշխատող
2. Ավագյան Գայանե Արամի – գիտաշխատող
3. Վարդանյան Քնարիկ Ջոնիկի – գիտաշխատող
4. Հայրապետյան Արփինե Արծրունու –գիտաշխատող
5. Միքայելյան Միքայել Վարազդատի - գիտաշխատող
6. Տիգրանյան Վարսիկ Իշխանի - գիտաշխատող
7. Գսպոյան Գրիշա Մախակի - գիտաշխատող

Ծրագրի համառոտ բովանդակությունը

ՀՀ տնտեսական իրավիճակը բնութագրվում է կարճաժամկետ հավասարակշռության պայմաններով, ընդ որում տնտեսությունում առկա ոչ մրցակցային գործոններն ու դրանով պայմանավորված գների անկանոն փոփոխությունները հաճախ պայմանավորում են նաև թողարկման ծավալների

համապատասխան փոփոխություններ: Հետևաբար ամբողջական պահանջարկի մեծության, այն ձևավորող գործոնների, դրանց ազդեցության չափերի և դրանով պայմանավորված ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրությունն ու փոփոխության միտումների գնահատումը արդիական է ինչպես տնտեսական քաղաքականության մշակման, այնպես էլ դրա կիրառման արդյունավետության բարձրացման տեսանկյունից:

Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ տնտեսության վրա զգալի ազդեցություն ունեցով, որի ընդգրկունությունը, բարդությունն ու ինտենսիվությունը ցույց տվեցին, որ անգամ զարգացած շուկայական տնտեսություններն ի գործու չեն դիմակայելու ճգնաժամերի ալիքներին և, նույնիսկ, ոչ ճգնաժամային՝ սովորական պայմաններում, գների հարաբերական կայունությունն և բարձր զբաղվածությունը երաշխավորված չեն: Տնտեսական ճգնաժամերին հակազդելու համար անհրաժեշտ է մշակել ամբողջական պահանջարկի մեծության և նրա առանձին բաղադրիչների փոփոխությունները պայմանավորող գործոնների կառավարման այնպիսի համակարգ, որը կապահովի ավելցուկային պահանջարկը ներքաշելու կամ անբավարար պահանջարկը խթանելու գործուն մեխանիզմներ:

Իսկ այդպիսի կառավարման համակարգը առաջին հերթին ենթադրում է ամբողջական պահանջարկի գրագետ կանխատեսում, ինչը հնարավորություն կտա խուսափել երկրում տնտեսական իրավիճակի կտրուկ տատնումներից, կամ գոնե հարթել ճգնաժամային ալիքների ամպլիտուդը, էականորեն բարձրացնել վարվող տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և, վերջին հաշվով, ապահովել համաչափ, կայուն տնտեսական աճ: Միաժամանակ ամբողջական պահանջարկի կանխատեսումը կարևոր է՝ տնտեսությանը պետական միջամտության չափը ճշգրտելու և միջամտության գործուն մեխանիզմներ մշակելու, մասնավոր հատվածի վրա վերահսկողություն սահմանելու, ինչպես նաև կանխատեսված պահանջարկը խթանելու կամ կաշկանդելու տեսանկյուններից:

Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը

Հետազոտության արդյունքում ծրագրի կատարման նախորդ ժամանակահատվածներում որոշված ՀՀ ամբողջական պահանջարկի մեծության, նրա կառուցվածքի որակական եւ քանակական կողմերի ուսումնասիրության ու

գնահատման հիման վրա կորոշվեն ամբողջական պահանջարկը գոյացնող առանձին քաղաքիչները, դրանց վրա ազդող գործոններն ու կգնահատվեն դրանց ազդեցության չափերը, ինչի հիման վրա տնտեսական քաղաքականություն մշակող մարմիններին կառաջարկվի առանձին գործոնների փոփոխությամբ պայմանավորված ամբողջական պահանջարկի փոփոխության միտումներն ու չափը նկարագրող մոդել, որի միջոցով հնարավոր կլինի որոշել անբավարար կամ ավելցուկ պահանջարկի մեծությունը՝ ծրագրավորված տնտեսական աճի համար տնտեսության դինամիկ հավասարակշռությունն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ ՀՀ տնտեսությունը գտնվում է լրիվ զբաղվածության մակարդակին չհամապատասխանող հատվածում, ամբողջական պահանջարկի կառուցվածքային փոփոխություններն ու դրանց կանխատեսումն, ինչպես նաև ամբողջական առաջարկի և ամբողջական պահանջարկի համեմատական վերլուծությունը իրականացվելու է 6 կտրվածքով.

1. հետազոտության նախորդ փուլերում կատարված ՀՀ ամբողջական պահանջարկի վրա ազդող գործոնների տեսապրակտիկ դասակարգման և դրանց ազդեցության չափերի որոշման հիման վրա, պարզել այն գործոնները, որոնք հետձգնաժամային այս փուլում նույնպես պահպանում են իրենց ազդեցությունը,
2. որոշել ՀՀ ամբողջական պահանջարկի փոփոխություններին՝ ամբողջական առաջարկի «արձագանքելու» արագությունը,
3. գնահատել նախա և հետձգնաժամային պայմաններում ՀՀ արտադրության ծավալների փոփոխության չափերը և բացահայտել փոփոխությունների պատճառները և միտումները,
4. գնահատել առանձին գործոնների փոփոխությամբ պայմանավորված ամբողջական պահանջարկի փոփոխության չափերն ու միտումները, որը ազդակ կլինի որոշելու անբավարար կամ ավելցուկ պահանջարկի մեծությունը,
5. կանխատեսել ամբողջական պահանջարկի փոփոխություններն ու դրանց հնարավոր պատճառները, որն իրականացվելու է հետևյալ փուլերով.
 - ✓ կանխատեսման մեթոդների ընտրություն,
 - ✓ կանխատեսման մեթոդի հուսալիության գնահատում,

- ✓ ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի փոփոխություններ առաջացնող պատճառների կանխատեսում,
- ✓ ամբողջական պահանջարկի բաղադրիչների՝ տնային տնտեսությունների, ձեռնարկությունների ու պետական, ավելացման հեռանկարների որոշում:

6. Առաջարկել ամբողջական պահանջարկի փոփոխությունների չափը նկարագրող գործոնների կառավարման համակարգ՝ նպաստելով պետության տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները

Հետազոտության նախորդ փուլերում մասնակիորեն ուսումնասիրվել և բացահայտվել է ՀՀ տնտեսության համար սպառողների վարքագիծը՝ օգտվելով սպառման տեսություններից:

Հիմնվելով հետազոտության նախորդ փուլերում ստացված արդյունքների վրա փորձ է արվելու ուսումնասիրել ամբողջական պահանջարկի երկու տարրերի՝ սպառման և ներդրումների մեծություններն ու դրանց փոխազդեցությունները, ինչն անհրաժեշտ է տնտեսական աճի կանխատեսման համար:

Ներդրումային պահանջարկն ու նրա վրա ազդող գործոնները դիտարկվելու են ներդրումների ծավալի, որակի, կառուցվածքի, արդյունավետության, սպառման վրա դրական և բացասական կապի, պետական և մասնավոր ներդրումների հարաբերակցության և դրանց փոխազդեցության տեսանկյուններից, ինչպես նաև, խնայողությունների և ներդրումների, մասնավոր տրանսֆերտների և ներդրումների, կապիտալի ներհոսքի և ներդրումների միջև կապի բացահայտման և ազդեցության գնահատման առումներով: Պետական պահանջարկի առումով բացահայտվելու են պետական ծախսերի առանձին մասերի ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա հետևյալ ուղղություններով.

- պետական պահանջարկի աճ ապահովող գործոնների վերլուծություն, դրանց ազդեցության գնահատում և պետական ծախսերի կանխատեսում միջնաժամկետ հատվածում,
- պետական ծախսերի կառուցվածքի բարելավման հնարավորությունների բացահայտում,

- բյուջեի ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցության դինամիկ վերլուծություն և ամբողջական պահանջարկի վրա ազդեցության գնահատում,
- պետական պահանջարկի այն մասի որոշում, որն ուղղակի կամ անուղղակի ձևով ֆինանսավորում է ներմուծումը և նպաստում երկրից կապիտալի արտահոսքին:

Ամբողջական պահանջարկի հաջորդ բաղադրիչի՝ զուտ արտահանման առումով դիտարկվելու է վճարային հաշվեկշռի ընթացիկ և կապիտալի հաշիվների մնացորդի փոփոխությունների կախվածությունը մի քանի հիմնական գործոններից՝ մասնավորապես փոխարժեքից: Այդ նպատակով կկառուցվեն նշված հաշիվների մնացորդների փոփոխությունները նկարագրող էկոնոմետրիկ մոդելներ:

Գիտական աշխատանքի արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված գիտական հոդվածներ և զեկուցումներ գիտաժողովներում: